

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 31/3

28 հուլիսի 2015 թ.

Քննարկվեց Ա/Ձ Աննա Միրզոյանի 14.07.2015 թ-ի գրությամբ բերված գանգատը ՀՀ ՖՆ Կապանի ՏՀՏ 29.06.2015 թ-ի թիվ 6108419 ակտի դեմ:

Ա/Ձ Աննա Միրզոյանի գանգատում բերված փաստարկները.

Սույն թվականի 15.04.2015թ.-ին համաձայն Կապանի հարկային տեսչության պետի 07.04.2015թ. թիվ 6104145 հանձնարարագրի անհատ ձեռնարկատեր Աննա Միրզոյանին պատկանող խանութում կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Ստուգման արդյունքներով կազմվել է թիվ 6104145 ակտը, որի համաձայն անհատ ձեռնարկատեր Աննա Միրզոյանին «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով նշանակվել է 150.000 դրամի տուգանք:

Կապանի հարկային տեսչության պետի 07.04.2015թ. թիվ 6104145 հանձնարարագրով իրականացված հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգման ընթացքում վերցվել են «Ահմադ մրգային» տեսակի թեյ և «Բոյալ ռիտուալ» տեսակի սուրճ՝ ընդհանուր գումարով 3000 դրամի, որոնք դրոշմապիտակավորված չեն եղել:

Դրանից որոշ ժամանակ անց Կապանի հարկային տեսչության պետի 11.05.2015թ. թիվ 6108419 հանձնարարագրի համաձայն կատարվել է հսկիչ նշանների կիրառման ճշտության ստուգում, որի ժամանակ հիմք է ընդունվել վերը նշված հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգման ժամանակ վերցված ապրանքների դրոշմապիտակավորված չլինելը, ինչը և դիտվել է որպես «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 9.2 հոդվածի պահանջների խախտում:

Ա/Ձ Աննա Միրզոյանը գտնում է, որ Կապանի հարկային տեսչության պետի 07.04.2015թ. թիվ 6104145 հանձնարարագրով իրականացված հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգման ընթացքում վերցված ապրանքները չեն կարող հիմք հանդիսանալ դրանից հետո 11.05.2015թ.-ին բացված թիվ 6108419 հանձնարարագրի համաձայն կատարված հսկիչ նշանների կիրառման ճշտության ստուգման ընթացքում որպես խախտում արձանագրելու համար, քանի որ հսկիչ նշանների կիրառման ճշտության ստուգման ընթացքում փաստացի որևէ ապրանք չի գնվել, հետևապես նաև չդրոշմապիտակավորված որևէ ապրանքի իրացման փաստ չի արձանագրվել:

Տվյալ դեպքում պետք է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վարչական վարույթի ժամկետն սկսվում է դիմումը տվյալ վարչական մարմնում մուտքագրելու օրվանից, իսկ վարչական մարմնի նախաձեռնությամբ ընդունվելիք վարչական ակտերի համար՝ նախաձեռնության օրվանից: Իսկ նույն հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վարչական վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է:

Բացի դա, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն՝ Վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում:

Տվյալ դեպքում ստուգման ակտում նշված ապրանքները գնվել են 15.04.2015թ.-ին, այսինքն՝ խախտումը կատարվել է 15.04.2015թ.-ին, իսկ ստուգման ակտը կազմվել է երկու ամսից ավելի ժամկետից հետո՝ 29.06.2015թ.-ին, երբ անցել է թե «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով նախատեսված մեկ ամիսը, թե «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով նախատեսված՝ վարչական տույժ նշանակվելու երկամսյա ժամկետները:

Վերը նշված հիմնավորումներից հետևում է, որ նախ՝ 11.05.2015թ. N 6108419 հանձնարարագրով կատարված հսկիչ նշանների կիրառման ճշտության ստուգում ընթացքում որևէ ապրանքի գնում չի կատարվել, հետևապես նաև խախտում չի արձանագրվել, իսկ 15.04.2015թ.-ին գնված ապրանքների համար Անհատ ձեռնարկատեր Աննա Միրզոյանը չի կարող պատասխանատվության ենթարկվել, քանի որ անցել են դրա համար նախատեսված բոլոր ժամկետները:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները Ա/Ձ Աննա Միրզոյանը խնդրում է անվավեր ճանաչել Կապանի հարկային տեսչության 29.06.2015թ.-ի թիվ 6108419 ակտը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն ՀՀ ՖՆ Կապանի ՏՀՏ պետի 07.04.2015թ. թիվ 6104145 հանձնարարագրի Ա/Ձ Աննա Միրզոյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Ստուգման արդյունքում կազմվել է թիվ 6104145 ակտը, որի համաձայն ստուգման ընթացքում գնվել են «Ահմադ մրգային» տեսակի թեյ և «Ռոյալ ռիտուալ» տեսակի սուրճ՝ ընդհանուր գումարով 3000 դրամի, որոնք դրոշմապիտակավորված չեն եղել:

Այնուհետև, ՀՀ ՖՆ Կապանի ՏՀՏ պետի 11.05.2015 թ-ի թիվ 6108419 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Աննա Միրզոյանի մոտ կատարվել է հսկիչ նշանների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Կապանի ՏՀՏ 29.06.2015 թ-ի թիվ 6108419 ակտը, որի 1-ին կետով հիմք ընդունելով վերը նշված հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգման ժամանակ գնված ապրանքների դրոշմապիտակավորված չլինելու հանգամանք, արձանագրվել է «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 9.2 հոդվածի պահանջների խախտում, որը համաձայն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 170.8-րդ հոդվածի ենթակա է վարչական պատասխանատվության:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ ՖՆ Կապանի ՏՀՏ պետի 11.05.2015 թ-ի թիվ 6108419 հանձնարարագիրը հրապարակվելու և դրա արդյունքում կազմված թիվ 6108419 ակտով արձանագրված խախտման նպատակը եղել է Ա/Ձ Աննա Միրզոյանին «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 170.8-րդ հոդվածի հատկանիշներով վարչական պատասխանատվության ենթարկելը:

Մասնավորապես, հաշվի առնելով այն հանգամանքը, որ չդրոշմապիտակավորված ապրանքների իրացման փաստն արձանագրվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգման ժամանակ, հետևապես խախտումն հիմնավորված համարելու համար ՀՀ ՖՆ Կապանի ՏՀՏ պետի կողմից 11.05.2015 թ-ին հրապարակվել է Ա/Ձ Աննա Միրզոյանի մոտ հսկիչ նշանների կիրառման ճշտության ստուգում կատարելու մասին թիվ 6108419 հանձնարարագիրը, որի հիման վրա 29.06.2015 թ-ին թ-ին կազմված թիվ 6108419 ակտով արձանագրվել է Ա/Ձ Աննա Միրզոյանի կողմից «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 9.2 հոդվածի պահանջները խախտված լինելու, ինչպես նաև «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 170.8-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցը կիրառելու անհրաժեշտության մասին: Սակայն, տվյալ պարագայում հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն, վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Աննա Միրզոյանի կողմից «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 9.2 հոդվածի պահանջները խախտված լինելու, ինչպես նաև այդ խախտման համար «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 170.8-րդ հոդվածի համաձայն վարչական պատասխանատվության ենթարկվելու հանգամանքն արձանագրվել է ՀՀ ՖՆ Կապանի ՏՀՏ 29.06.2015 թ-ի թիվ 6108419 ակտով, այն դեպքում, երբ վերոգրյալ խախտումը Ա/Ձ Աննա Միրզոյանի կողմից կատարվել է 15.04.2015 թ-ին: Այսինքն, խախտման փաստն արձանագրվել է այն կատարվելու օրվանից երկու ամիսը լրանալուց հետո ընկած ժամանակահատվածում: Հետևապես, ՀՀ ՖՆ Կապանի ՏՀՏ 29.06.2015 թ-ի թիվ 6108419 ակտով արձանագրված խախտումը չի կարող հիմք հանդիսանալ Ա/Ձ Աննա Միրզոյանին «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 170.8-րդ հոդվածի համաձայն վարչական պատասխանատվության ենթարկվելու համար:


Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ ՖՆ Կապանի ՏՀՏ պետի 11.05.2015 թ-ի հանձնարարագրի հիման վրա կատարված ստուգումը չի ծառայել իր նպատակին, քանի որ ՀՀ ՖՆ Կապանի ՏՀՏ 29.06.2015 թ-ի թիվ 6108419 ակտը չի կարող առաջացնել որևէ իրավական հետևանք, այն է՝ ստուգման ակտով արձանագրված խախտման համար նախատեսված պատասխանատվությունը դրա ժամկետը բաց թողնվելու հետևանքով կիրառելի չէ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Կապանի ՏՀՏ 29.06.2015 թ-ի թիվ 6108419 ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝

**Վ.ՄԻՐՈՅԱՆ**